


ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՇՂԹԱՅԻ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՄՈԴԵԼԸ

Փակ շղթայում անընդհատ հոսանք ստանալու համար կողմնակի ուժերի դերն ավելի լավ պատկերացնելու նպատակով դիմենք էլեկտրական հոսանքի և ջրի հոսքի հետևյալ համեմատությանը:



Նկարում պատկերված Ա անոթը լցված է ջրով: Եթե բացենք Փ փականը, ապա գրավիտացիոն ուժի ազդեցությամբ ջուրը կսկսի հոսել դեպի Բ անոթ: Որոշ ժամանակ անց Ա անոթում ջուրը կվերջանա, և նրա հոսքը կդադարի: Չընդհատվող հոսք ստանալու համար անհրաժեշտ է ջուրը Բ անոթից անընդհատ մղել դեպի Ա անոթ: Դա կարելի է անել Պ պոմպի օգնությամբ: Էլեկտրական շղթայում պոմպի դերը կատարում է հոսանքի աղբյուրը, իսկ հեղուկի վրա պոմպից ազդող ճնշման ուժերին փոխարինում են հոսանքի աղբյուրում գործող կողմնակի ուժերը: Քննարկվող օրինակում ջրի հոսքը պայմանավորված է գրավիտացիոն ուժերի դեմ պոմպի կատարած աշխատանքով, իսկ փակ շղթայում էլեկտրական հոսանքը պայմանավորված է էլեկտրական ուժերի դեմ կողմնակի ուժերի կատարած աշխատանքով: